

- **Փիլոն Ալեքսանդրացի**¹⁹ (յուն.՝ Φίλων, մոտ. 20 մ.թ.ա. – 50 թ.), հրեայ փիլիսոփան, որ Պլատոնեն մեծապես ազդուած էր: Առանց անտեսելու գործնական կեանքի առաջադրանքները, ան կը գերադասէր աստուած-իմաստութեան ու աստուածոտեսութեան նպատակները:
- **Պլոտինոս**²⁰ (յուն.՝ Πλωτίνος, 205 – 270 թ.), որ **Նոր-Պլատոնական** (Neo-Platonism) փիլիսոփայական ուղղութեան հիմը դրաւ եգիպտական Ալեքսանդրիոյ²¹ Նշանաւոր դպրոցին մէջ, ապա այս նոր ուղղութիւնը փոխադրեց Հռոմ: Ան եւս մեծ կարեւորութիւն տուած է աստուածիմաստութեան ու աստուածոտեսութեան:

Հին Դարաշրջանի վերջաւորութեան (մ.թ.ա. 100 մինչեւ մ.թ. 400 թ.) սկսած աստուածիմաստութեան գլխաւոր նպատակը եղած է՝ աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան համադրութիւնը:

Աստուածաբանութեան (Theology) եւ փիլիսոփայութեան (Philosophy) համադրութիւնը սակայն, թէ՛ վերոյիշեալ ժամանակաշրջանին եւ թէ անկէ ետք՝ եւ մինչեւ այսօր, այնքան ալ հեշտ չէ եղած:

Հին Դարաշրջանի վերջաւորութիւնը, առաւելաբար, կը յատկանշուէր կրօնական ու խորհրդապաշտական (միստիկ, յուն.՝ *mystikós*) հակումներու տարածմամբ, որոնք եթէ սկզբնական շրջանին նկատելի էին փիլիսոփայութեան ոլորտէն դուրս, բայց շատ չանցած, անոնք հաստատ քայլերով պիտի ներթափանցէին նաեւ փիլիսոփայութեան ոլորտէն ներս:

Փիլիսոփայութեան կողմէ, յունա-հելլենիստական ժամանակաշրջանին տարածուած յունական *բազմաստուածեան* (Polytheism) դիցաբանութիւնը կամ անտեսուած էր կամ այլաբանական մեկնաբանութիւններով արժեզրկուած, մինչ Արեւելքի մէջ մանաւանդ կրօնական որոշ հոսանքներ շատ ակտիւ տիրապետող էին:

Մեծն Ալեքսանդր Գ. Մակեդոնացի թագաւորի (Alexander III the Great of Macedon, 356 – 323 մ.թ.ա.) օրով, Յունաստանի սահմանները անհամեմատ կ'ընդարձակուին եւ կը յառաջանայ լայնատարած նոր ու հզօր կայսրութիւն մը, որ Արեւելքէն կը հասնէր մինչեւ Հնդկաստան, իսկ հարաւէն՝ մինչեւ Եգիպտոս: Այս կայսրութեան մէջ կը տարածուէր յունարէնը, որպէս խօսակցական լեզու ու յունական մտածելակերպը, այլ խօսքով նոր մշակոյթ մը, որ պիտի կոչուէր *հելլենիստական մշակոյթ*, ուր յունական փիլիսոփայական գաղափարները իրենց կարեւոր տեղը գտած էին:

19 Փիլոն Ալեքսանդրացիի մասին, ընթացիկ **Մաս-2**ի մէջ յատկացուած է յատուկ բաժին մը, տե՛ս Բ. գլուխ, էջ 50:

20 Պլոտինոսի մասին, ընթացիկ **Մաս-2**ի մէջ յատկացուած է յատուկ բաժին մը, տե՛ս Գ. գլուխ, էջ 66:

21 Ալեքսանդրիոյ եւ իր Նշանաւոր դպրոցին մասին, ընթացիկ **Մաս-2**ի մէջ յատկացուած է յատուկ բաժին մը, տե՛ս Ա. գլուխ, էջ 40: